բաթում և Ղարաբաղում. 2) Միաժամանակ, խորհրդաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները ամենակտրուկ միջոցներ ձեռք առնեն վերացնելու համար հայ և մահմեդական ազգաբնակութիւնների միջև ընդհարման բոլոր հնարաւորութիւնները՝ համապատասխան հանրապետութիւնների սահմաններում: 3) Այս որոշման մասին չտապով տեղեկացնել Ադրբէջանի և Հայաստանի կառավարութիւններին, որպէսզի նրանք ձեռք առնեն համապատասխան միջոցներ»:

5րդ նիստում, ապր. 12-ին, խորհրդաժողովը զբաղուեց արիւնհեղութիւնը դադարեցնելու պայմաններով, դարձեալ երկար վէճ ծագեց հայերի և ադրբէջանցիների միջև Ղարաբաղի մասին: Վերջիններս պնդում էին, որ Ղարաբաղը Ադրբէջանի մասն է և Ղարաբաղի խնդիրը՝ Ադրբէջանի ներքին խնդիր. հայերը, ընդհակառակը, համարում էին, որ Ղարաբաղը Ադրբէջանի մաս չէ: Երկու կողմերը մնացին իրենց տեսակէտին, և որոշուեց «անմիջապէս լիովին վերականգնել այն իրաւական վիճակը, որ գոյութիւն ունէր ընդհարումներից առաջ և հիմնուած էր հայ-ադրբէջանեան և անդրկովկասեան հանրապետութիւնների խորհրդաժողովներում ձեռք բերուած համաձայնութեան վրա՝ կառավարութիւնների հետ ազգային խորհուրդների պայմանագրի հիմամբ»:

Նոյն նիստում որոշուեց ընտրել 6 հոգինոց յանձնախումբ՝ 2-ական ամէն մի պատուիրակութիւնից և ուղարկել Ադրբէջան ու Հայաստան խորհրդաժողովի որոշումը գործադրելու համար:

Ապա ուղարկուեց 3 յանձնախումբ. մէկը՝ Մախարաձէ, Մամիկոնեան, Աղայև՝ Ղազախ, ուր նոյնպէս հայ-թրքական ընդհարումներ էին պատահել. միւսը՝ Ի. Ռամիշվիլի, Ա. Արեղեան ու Ջ. Սուլթանով՝ Շարուր-Նախիջևան և երրորդը՝ Ղարաբաղ: Յանձնախմբերը մեկնեցին համապատասխան վայրերը, բայց յետագայ դէպքերի պատճառով չօշափելի գործ չկատարեցին:

Այնուհետև խորհրդաժողովը երկարօրէն զբաղուեց կոնֆեդերացիայի հարցով: Ադրբէջանի պատուիրակութիւնը ներկայացրեց «Անդրկովկասեան Հանրապետութիւնների Խորհրդի» նախագիծը: Առաջարկւում էր երեք հանրապետութիւնների ներկայացուցիչներից կազմել մնայուն միջազգային մի խորհուրդ, որի պարտականութիւնը պիտի լինէր «1) հոգալ հանրապետութիւնների արտաքին ապահովութիւնը և նրանց անկախութեան ու չէզոքութեան պահպանումը, 2) հսկել, որ հանրապետութիւնների միջև ծագող վիճելի խնդիրների լուծումը միջնորդ դատարանի կողմից՝ գործադրուի, 3) հետևել, որ կիրառուեն դաշնագրերը հանրապետութիւնների միջև, 4) մշակել միջհանրապետական դաշնագրերի նախագծեր, 5) ձգտել խաղաղութեամբ լուծելու հանրապետութիւնների միջև ծագող վէճերը և եզրակացութիւններ տալ առանձին հանրապետութեանց կառավարութիւնների առաջարկով»: Խորհուրդը պիտի կազմէր 12 հոգուց. իւրաքանչիւր հանրապետութիւն պիտի տար 2 ներկայացուցիչ խորհրդարանից և երկու՝ կառավարութիւնից, մէկ տարի ժամանակով: Խորհուրդը պիտի ունենար սովորական և արտակարգ նստաշրջաններ: Եւ այլն:

Ի հարկէ, այս դեռ կոնֆեդերացիա չէր, բայց մի քայլ էր դէպի կենֆեդերացիա: Ադրբէջանցիք քայլ առ քայլ հետապնդում էին իրենց հիմ-